Հարգելի ընկ. Մռավյան

Այսօր առավոտյան արթնանալիս ես մշուշոտ կերպով հիշեցի, որ կարծեմ երեկ երեկոյան հեռախոսով Ձեզ հետ խոսելիս թույլ եմ տվել գործածել Ձեր հասցեին մի քանի անպատշաճ խոսքեր: Այս տհաճ հանգամանքը ես հնարավոր եմ գտնում, որովհետև երեկ երեկոյան ես եղել եմ միանգամայն ինքնակորույս դրության մեջ. առանձնապես ինձ խորը ցավ է պատճառում այն, որ իմ ինքնակորույս այդ դրությունը զուգադիպել է մի անձնավորության, որի հանդեպ ես չեմ կարող ունենալ ոչինչ, բացի խորագույն հարգանքից: Այսօր ես հեռանում եմ Հայաստանից, հեռանում եմ անչափ լքված և դառնացած սրտով. միակ բանը, որ ինձ մխիթարում է՝ դա Ձեր համարյա եղբայրական վերաբերմունքն էր դեպի ինձ. այդ վերաբերմունքը ես ամենագոհեիկ ձևով ոտնահարեցի, կրկնում եմ, ինքնակորույս վիճակում: Եթե ես հույսի նշույլ անգամ ունենայի, որ Դուք կներեք իմ այդ ծայրահեղ нелепый քայլը՝ դա արդեն բավական կլիներ, որպեսզի ես հեռանայի այստեղից միանգամայն սփոփված և մխիթարված: Простите, тов. Мравян, ради бога, ներեցեք:

Ընկ. խորին հարգանքներով՝

Ե. Չարենց

1927-26-II

Երևան